ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 23.02.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/15

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) քննելով «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից 06.02.2018թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2018/15 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «Ֆոտոն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Ֆոտոն» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացված 06.02.2018թ. բողոքով, ինչպես նաև ի լրումն բողոքի 12.02.2018թ. գրությամբ, հայտնել է, որ «Երքաղլույս» ՓԲԸ-ի կարիքների համար՝ շինանյութի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՔԼ-ԲՄԱՊՁԲ-18/1» ծածկագրով բաց մրցույթին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) հայտ են ներկայացրել «Մեծ Ծիածան», «Ռաֆ-Օջախ», «Էկոմիքս», «Լիդեր Քոմփանի» ՍՊ ընկերությունները:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7-րդ կետի 7.1 ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսին:

Վերոնշյալ կազմակերպությունների կողմից ներկայացված հայտի ապահովման գումարը գերազանցում է հրավերով պահանջվող գնային առաջարկի հինգ տոկոսը:

Ընկերությունը վկայակոչել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասը, որի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ընկերությունը գտնում է, որ գնահատող հանձնաժողովը պետք է մերժեր «Մեծ Ծիածան», «Ռաֆ-Օջախ», «Էկոմիքս», «Լիդեր Քոմփանի» ՍՊ ընկերությունների հայտերը, քանի որ ներկայացված հայտի ապահովումները կազմված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Ընկերությունը վկայակոչել է Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը, 50-րդ հոդվածի 7-րդ մասը,Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը:

«Ֆոտոն» ՍՊԸ-ն բողոքով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին խնդրել է մերժել «ԵՔԼ-ԲՄԱՊՁԲ-18/1» ծածկագրով բաց մրցույթի մասնակիցներ «Մեծ Ծիածան», «Ռաֆ-Օջախ», «Էկոմիքս», «Լիդեր Քոմփանի» ՍՊ ընկերությունների հայտերը:

«Ֆոտոն» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 09.02.2018թ. ժամը 14:30-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. **<u>«Երքաղլույս» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>**

«Երքաղլույս» ՓԲԸ-ն 09.02.2018թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«ԵՔԼ-ԲՄԱՊՁԲ-18/1» ծածկագրով բաց մրցույթին հայտ են ներկայացրել «Տոր», «Մեծ Ծիածան», «Ռաֆ-Օջախ», «Էկոմիքս», «Լիդեր Քոմփանի», «Էրոդավ», «Ֆոտոն» ՍՊ ընկերությունները, Ա/Ձ Դավիթ Պետրոսյանը:

Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հանձնաժողովը որոշել է Ընթացակարգի՝

- 14-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել «Տոր» ՍՊԸ-ին:
- 4, 7, 11, 12, 13, 18, 25, 26, 28, 29, 31, 32, 40-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչել «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ին:
- 1, 2, 6, 8, 10, 15, 16, 17, 21, 22, 23, 24, 30, 33, 36, 37, 38, 39, 41-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչել «Էկոմիքս» ՍՊԸ-ին:
- 27-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչել «Ֆոտոն» ՍՊԸ-ին:
- 5,9-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչել «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ին:
- 3, 19, 34, 35-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչել «Լիդեր Քոմփանի» ՍՊԸ-ին:
- 20-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչել Ա/Ձ Դավիթ Պետրոսյանին:

Հայտեր ներկայացրած մասնակիցները սահմանված կարգով ներկայացրել են նաև տուժանքի մասին համաձայնագրեր, մասնավորապես ներկայացված գնային առաջարկի մինչև 5 տոկոսը, այն է՝

- «Տոր» ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկը կազմել է 2 720 000 ՀՀ դրամ, իսկ հայտի ապահովումը՝ 136 000 ՀՀ դրամ, այսինքն ճշգրիտ մինչև 5 տոկոսը.
- «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկը կազմել է 21 402 250 ՀՀ դրամ, իսկ հայտի ապահովումը 1 070 113 ՀՀ դրամ, այսինքն 0.5 ՀՀ դրամ ավել.
- «Էկոմիքս» ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկը կազմել է 28 157 206 ՀՀ դրամ, իսկ հայտի ապահովումը՝ 1 407 861 ՀՀ դրամ, այսինքն 0.7 ՀՀ դրամ ավել.
- «Էրոդավ» ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկը կազմել է 4 638 600 ՀՀ դրամ, իսկ հայտի ապահովումը՝ 230 000 ՀՀ դրամ, այսինքն 5 տոկոսից պակաս.
- «Ֆոտոն» ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկը կազմել է 20 775 766 ՀՀ դրամ, իսկ հայտի ապահովումը՝ 1 038 788.3 ՀՀ դրամ, այսինքն ճշգրիտ մինչև 5 տոկոս.
- «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկը կազմել է 15 646 950 ՀՀ դրամ, իսկ հայտի ապահովումը՝ 782 350 ՀՀ դրամ, այսինքն 2,5 ՀՀ դրամ ավելի.
- «Լիդեր Քոմփանի» ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկը կազմել է 5 127 550 ՀՀ դրամ, իսկ հայտի ապահովումը՝ 256 378 ՀՀ դրամ, այիսնքն 0.5 ՀՀ դրամ ավել.
- Ա/Ձ Դավիթ Պետրոսյանի ներկայացրած գնային առաջարկը կազմել է 3 185 000 ՀՀ դրամ, իսկ հայտի ապահովումը՝ 159 250 ՀՀ դրամ, այսինքն ճշգրիտ մինչև 5 տոկոսը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին նախադասությունը սահմանում է, որ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները: Իրավական ակտի մեկնաբանությամբ չպետք է փոփոխվի դրա իմաստը:

Վերոհիշյալ օրենքների նշված դրույթների համակցությունն իր տարածական մեկնաբանությամբ նշանակում է, որ Օրենսդիրը, որպես հայտի ապահովում, դիտարկում է հայտ ներկայացրած կազմակերպության ներկայացրած ընդհանուր գնային առաջարկի հիման վրա հայտի ապահովման չափը հավասար է մինչև 5 տոկոսին:

Առհասարակ, «Գնումների մասին» ՀՀ օրենքում գործածված են հետևյալ բառակապակցությունները, մասնավորապես՝

* « ... ավելի, քան 10 տոկոսը ...», այսինքն 10 և ավելի տոկոս,

*«... չի գերազանցում գնումների բազային միավորը ...» կամ «... եթե գերազանցում է գնումների բազային միավորը ...», այսինքն 1.000.000 չպետք է գերազանցի կամ գերազանցում է 1.000.000-ը,

*«... ժամկետը առնվազն 10 օրացուցային օր է ...» կամ «... ժամկետը 15 օրացուցային օր է, այսինքն 10 օրացուցային օրը նվազագույնն է կամ 15 օրացուցային օրը ճշգրիտ է,

*«...մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում...» կամ «... ապահովման չափը կազմում է պայմանագրի գնի 10 տոկոսը...», այսինքն պայմանագրի ապահովումը պարտադիր պայման է՝ անկախ իրավահարաբերությունների մասնակիցների կամքից կամ ապահովման չափի պարտադիր կայուն 10 տոկոսն է պայմանագրի գնի,

*«...պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում...», այսինքն 1-10 օրվա ժամանակահատվածում իրավահարաբերության մասնակիցն իրականացնելու է համապատասխան գործողությունը՝ սկսած պահանջի ստացման պահից,

*«...ոչ ուշ, քան 20 օրացուցային օրվա ընթացքում...», այսինքն իրավակիրառողի կողմից կոնկրետ գործողությունները պետք կատարվեն այնպիսի օրացուցային ռեժիմով, որ 20 օրացուցային օրը լինի իրավահարաբերության վերջնաժամկետը և այլն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի այդ դրույթը, մասնավորապես հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին, նշանակում է, որ Օրենսդիրը սահմանել է քանակային սահմանի չափը, որը ցույց է տալիս հնարավոր կամ մոտավոր սահմանը, ինչն օրենքի իմաստով նշանակում է մոտավորապես կամ շուրջ 5 տոկոս, այսինքն Օրենսդրի իմերատիվ – հրամայական ոճն տվյալ պարագայում

վերաբերում է շուրջ կամ նվազագույնը 5 տոկոսին, և 5 տոկոսի դրական տարբերության վերաբերյալ որևէ արգելող նորմի բովանդակություն չի ձևակերպել, հակառակ դեպքում Օրենսդիրը, ինչպես արդեն ներկայացվել է հիշատակված բառակապակցություններում ևս հստակ ձևակերպված են կոնկրետ իրավահարաբերությունների կարգավորումները, այսինքն Օրենսդիրը խնդրո առարկա դրույթը (Օրենքի 32-րդ հոդված 1 մաս) չի սահմանել, մասնավորապես այսպիսի ձևակերպմամբ՝

«...հայտի ապահովում, որի չափը կազմում է հայտով առաջարկվող գնի հինգ տոկոսը», այսպիսի ձևակերպման պարագայում տարածական մեկնաբանությունը պետք է դիտարկվի որպես ճշգրիտ թվային արտացոլում, ավելին այսպիսի ճշգրիտ ձևակերպում Օրենսդիրը օրենքի իմաստով սահմանել է, մասնավորապես Օրենքի 35-րդ հոդվածում:

Ըստ արդի հայերենի բացատրական բառարանի՝ «մինչև» բառի բացատրությունը ցույց է տալիս, մասնավորապես.

«Թվականների հետ ցույց է տալիս քանակային սահմանը՝ չափը: Գինը բարձրացրեց մինչև հազար ռուբլի», և «Թվականների հետ ցույց է տալիս հնարավոր կամ մոտավոր սահմանը՝ չափը և նշանակում է մոտավորապես, մոտ, շուրջ: - Շա՞տ են թշնամիները: - Մինչև երկու հարյուր: (տես՝ Հայերեն օնլայն բառարան, Աղայանի արդի հայերենի բացատրական բառարան, տես նաև՝ Տպագիր, Հատոր 2, էջեր 1011-1012, կետեր՝ 8-9):

Պետական լիազոր մարմնի, տվյալ պարագայում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից, հիմք ընդունելով գնումների մասին օրենսդրությունը հաստատվել է Հրավերի օրինակելի (տիպային) տարբերակը:

Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարանի «Երքաղլույս» ՓԲԸ-ի գնահատող հանձնաժողովի քարտուղարը «ԵՔԼ-ԲՄԱՊՁԲ-18/1» ծածկագրով անցկացված բաց մրցույթի Հրավերի 1-ին մասի 7-րդ կետի 7.1 ենթակետում բառացիորեն գրառել է լիազոր մարմնի Օրենքի շրջանակում հաստատած կարգավորումը, այն է՝ «Մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսին»:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ եթե իրավական ակտն ընդունվել է ի կատարումն կամ համաձայն նույն կամ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտի, ապա այդ ակտը մեկնաբանվում է՝

առաջին հերթին հիմք ընդունելով ավելի բարձր իրավական ուժ ունեցող ակտի դրույթներն ու սկզբունքները:

Հրավերով սահմանված խնդրո առարկա 7.1 ենթակետ ճիշտ նույն տարածական մեկնաբանությունն է լիազոր մարմնի, որը տեղայնացրել և ավելի կոնկրետացրել է Օրենսդրի կարգավորումը, այն է՝ հայտի ապահովումը չպետք է պակաս լինի կամ պետք է լինի հավասար հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսին կամ 5 տոկոսի չափը գերազանցող արգելող նորմ չի սահմանել, այսինքն լիազոր մարմինը, տվյալ պարագայում նաև գնահատող հանձնաժողովը նույնպես տվյալ կարգավորումը մեկնաբանել է, որպես կարգավորման նվազագույն շեմը, այսինքն՝ 5 տոկոսի չափը, և առաջնորդվելով խելամտության կանխավարկածով, հայտեր ներկայացրած մասնակիցների հայտերի ապահովման տուժանքներում ներկայացված թվային արտահայտությունները դիտարկել է բացառապես գնումների մասին օրենսդրության կարգավորումների շրջանակում, այն է՝ որպես հայտի ապահովման համար տուժանքի նվազագույն չափը պակաս չլինի 5 տոկոսից, այսինքն 7.1 ենթակետի կարգավորումը Գնահատող հանձնաժողովը մեկնաբանել է որպես քանակային սահմանի նվազագույն չափը, և քանի որ այդ կարգավորումով ոչ Օրենսդիրը, ոչ լիազոր մարմինն իրենց կարգավորումներով ճշգրիտ 5 տոկոսի կարգավորման ձևակերպում չեն տվել, այսինքն կարգավորումն օրինական չեն ձևակերպել, մասնավորապես՝ հայտի ապահովում, որի չափը կազմում է հայտով առաջարկվող գնի հինգ տոկոսը, ապա այս պարագայում հայտի ապահովման չափի դրական տարբերությամբ ներկայացված տուժանքները Հանձնաժողովը գնահատել է, որպես բավարար, քանի որ պակաս չէ եղել Օրենսդրությամբ նախատեսված գնային առաջարկի 5 տոկոսից, իսկ դրական տարբերության ընդունման բավարար գնահատումը դիտարկել է, որպես իրավաչափ և իբրև բացասական հետևանքը կրող կողմ, իհարկե ֆիսկալ դրական առումով:

Բողոքաբերը Խորհրդին ներկայացրած բողոքում մատնանշել է միայն «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ի, «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ի և «Էկոմիքս» ՍՊԸ-ի ներկայացրած հայտերը մերժելու պահանջը, իսկ նշված կազմակերպությունների հայտերը մերժելու հիմնավորումներում բողոքաբերը նշել է վերոհիշյալ կազմակերպությունների կողմից ներկայացված հայտի ապահովման գումարի 5 տոկոսի գերազանցման պատճառաբանությունը՝ Հրավերով

պահանջվող գնային առաջարկի, մինչդեռ վերը նշված համապատասխան մրցույթին հայտեր ներկայացրած և հայտի ապահովման գումարը գերազանցած (պայմանական ըստ Բողոքաբերի) մյուս մասնակցի, մասնավորապես՝ «Լիդեր Քոմփանի» ՍՊԸ-ի հայտը նույնպես մերժելու պահանջի բացակայությունը հստակ կարելի դիտարկել, որ Բողոքաբերի վերոհիշյալ հիմնավորումները, ի թիվս այլոց, միայն թվով 3 հայտ ներկայացրած մասնակիցների հայտերը մերժելու պահանջը հիմնազուրկ է, նպատակ ունի մրցույթում իր անհաջողությունը պարտադրել մյուս մասնակիցներին՝ ժամանակ ձգձգելու միջոցով, ինչպես նաև խաթարում է Պատվիրատուի սույն գնման ողջ գործընթացը, չի բխում նաև Գնումների մասին օրենսդրության պահանջներից, իսկ ներկայացված ապացուցողական նշանակության փաստերը և փաստական հանգամանքները վերաբերելի և թույլատրելի չեն սույն բողոքի քննության համար, ուստի Պատվիրատուն ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին խնդրել է հիմք ընդունել ՀՀ գնումների մասին օրենսդրությունը, ինչպես նաև ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 2017 թ. դեկտեմբերի 29-ի թիվ ԳԲԽ-ԷՍ-2017/55 վերաբերելի և թույլատրելի նախադեպային որոշումը և ամբողջովին մերժել Բողոքաբերի՝ ԳԲԽ-ԱՄ-2018/15 բողոքը՝ հիմնազուրկ և ոչ իրավաչափ լինելու պատճառաբանությամբ:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 09.02.2018թ. ժամը 14:30-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. ԳԲԽ-ԱՄ-2018/15 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-ԱՄ-2018/15 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Երքաղլույս» ՓԲԸ-ի կողմից «Երքաղլույս» ՓԲԸ-ի կարիքների համար կազմակերպվել է «ԵՔԼ-ԲՄԱՊՁԲ-18/1» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ են ներկայացրել «Մեծ Ծիածան», «Ռաֆ-Օջախ», «Էկոմիքս», «Լիդեր Քոմփանի» ՍՊ ընկերությունները:

2. «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկի ընդհանուր գինը կազմել է 21 402 250 ՀՀ դրամ, իսկ հայտի ապահովումը՝ 1 070 113 ՀՀ դրամ:

3. «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկի ընդհանուր գինը կազմել է 15 646 950 ՀՀ դրամ, իսկ հայտի ապահովումը՝ 782 350 ՀՀ դրամ:

4. «Էկոմիքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկի ընդհանուր գինը կազմել է 28 157 206 ՀՀ դրամ, իսկ հայտի ապահովումը՝ 1 407 861 ՀՀ դրամ:

5. «Լիդեր Քոմփանի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկի ընդհանուր գինը կազմել է 5 127 550 ՀՀ դրամ, իսկ հայտի ապահովումը՝ 256 378 ՀՀ դրամ:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.01.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրությանբ կայացված որոշմամբ «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ն առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել 4, 7, 11, 12, 13, 18, 25, 26, 28, 29, 31, 32, 40-րդ չափաբաժինների մասով, «Էկոմիքս» ՍՊԸ-ն՝ 1, 2, 6, 8, 10, 15, 16, 17, 21, 22, 23, 24, 30, 33, 36, 37, 38, 39 և 41-րդ չափաբաժինների մասով, «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ն՝ 5 և 9-րդ չափաբաժինների մասով, «Լիդեր Քոմփանի» ՍՊԸ-ն՝ 3, 19, 34, 35-րդ չափաբաժինների մասով:

7. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 31.01.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից 4, 7, 11, 12, 13, 18, 25, 26, 28, 29, 31, 32, 40-րդ չափաբաժինների մասով, «Էկոմիքս» ՍՊԸ-ն՝ 1, 2, 6, 8, 10, 15, 16, 17, 21, 22, 23, 24, 30, 33, 36, 37, 38, 39 և 41-րդ չափաբաժինների մասով, «Լիդեր Քոմփանի» ՍՊԸ-ն՝ 3, 19, 34, 35-րդ չափաբաժինների մասով, «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ն՝ 5 և 9-րդ չափաբաժինների մասով:

4. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով «Ֆոտոն» ՍՊԸ-ի 06.02.2018թ. բողոքը, «Երքաղլույս» ՓԲԸ-ն 09.02.2018թ. գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով

նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտի ապահովում:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

«Երքաղլույս» ՓԲԸ-ի կողմից «Երքաղլույս» ՓԲԸ-ի կարիքների համար կազմակերպվել է «ԵՔԼ-ԲՄԱՊՁԲ-18/1» ծածկագրով բաց մրցույթ:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 7-րդ կետի 7.1 ենթակետով սահմանվել է, որ մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ***հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսին:***

Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ են ներկայացրել «Մեծ Ծիածան», «Ռաֆ-Օջախ», «Էկոմիքս», «Լիդեր Քոմփանի» ՍՊ ընկերությունները:

«Մեծ Ծիածան» ՍՊԸ-ն հայտի թիվ 5 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը կազմել է ***21 402 250 ՀՀ դրամ***: Միևնույն ժամանակ մասնակցի կողմից որպես հայտի ապահովում ներկայացված տուժանքի մասին համաձայնագրին կից հայտի ապահովման վճարման պահանջագրում որպես հայտի ապահովման չափ նշվել է ***1 070 113 ՀՀ դրամ***:

Խորհուրդն արձանագրում է, որ «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովման գումարի չափը գերազանցում է գնային առաջարկի հինգ տոկոսը, քանի որ մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի հինգ տոկոսը կազմում է ***1 070 112.5 ՀՀ դրամ:***

Ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ն հայտի թիվ 5 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը կազմել է ***15 646 950 ՀՀ դրամ***: Մասնակցի կողմից ներկայացված հայտի ապահովման չափը կազմում ***է 782 350 ՀՀ դրամ***, որը Խորհուրդն արձանագրում է, որ գերազանցում է ներկայացված գնային առաջարկի հինգ տոկոսի չափը, քանի որ 15 646 950 հինգ տոկոսը հավասար է ***782 347.5***:

«Էկոմիքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկի ընդհանուր գինը կազմել է ***28 157 206 ՀՀ դրամ***, իսկ տուժանքի մասին համաձայնագրին կից հայտի ապահովման վճարման պահանջագրում որպես հայտի ապահովման չափ նշվել է՝ ***1 407 861 ՀՀ դրամ***: Խորհուրդն արձանագրում է, որ «Էկոմիքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովումը նույնպես գերազանցում է գնային առաջարկի հինգ տոկոսը, քանի որ

ներկայացված գնային առաջարկի՝ 28 157 206 ՀՀ դրամի հինգ տոկոսը կազմում է ***1 407 860.3 ՀՀ դրամ***:

«Լիդեր Քոմփանի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկի ընդհանուր գինը կազմել է ***5 127 550 ՀՀ դրամ***, իսկ հայտի ապահովման չափը՝ ***256 378 ՀՀ դրամ,*** որը գերազանցում է գնային առաջարկի հինգ տոկոսը (5 127 550*5%=***256 377.5***):

Այսպես, Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերությունը սահմանում է, որ հայտի ապահովման չափը հավասար է հայտով ***առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին:***

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 7-րդ կետի 7.1-րդ ենթակետը սահմանում է, որ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ***հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսին:***

Նույն հրավերի 8-րդ կետի 8.2-րդ ենթակետի համաձայն՝ հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և/կամ հայտի ապահովումը կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Խորհուրդն արձանագրում է, որ «Մեծ Ծիածան», «Ռաֆ-Օջախ», «Էկոմիքս», «Լիդեր Քոմփանի» ՍՊ ընկերությունների կողմից «ԵՔԼ-ԲՄԱՊՁԲ-18/1» ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում ներկայացված հայտի ապահովումը չի համապատասխանում հրավերի պահանջներին, քանի որ չի բավարարում գնային առաջարկի հինգ տոկոսի չափով ներկայացված լինելու պահանջը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Մեծ Ծիածան», «Ռաֆ-Օջախ», «Էկոմիքս», «Լիդեր Քոմփանի» ՍՊ ընկերությունների կողմից ներկայացված հայտի ապահովումը չի համապատասխանում Ընթացակարգի հրավերի պահանջներին, և Կարգի 41-րդ կետի համաձայն այն ենթակա չէ շտկման, ուստի Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի, Կարգի 40-րդ կետի 4-րդ կետի, ինչպես նաև Հրավերի 8-րդ կետի 8.2-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում վերջիններիս հայտերը ենթակա էին մերժման:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ «Ֆոտոն» ՍՊԸ-ի 06.02.2018թ. բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 06.02.2018թ. ներկայացված բողոքը բավարարել.

պարտավորեցնել «Երքաղլույս» ՓԲԸ-ի կարիքների համար կազմակերպված «ԵՔԼ-ԲՄԱՊՁԲ-18/1» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին ընդունել «Մեծ Ծիածան», «Ռաֆ-Օջախ», «Էկոմիքս», «Լիդեր Քոմփանի» ՍՊ ընկերությունների կողմից ներկայացված հայտերը մերժելու մասին որոշում:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անդամ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**